

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԼԵԶՈՒԻ ՊԱՏԿԵՐԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բան ոչ է բարբառ լեզուոյն, այլ՝ խոկումն մտացն:  
ՆԵՐՄԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ա. Բառի տարողութիւնը պատկերաւորութեան

Թերեւս ոչ մի բան այնքան չի յուզել Նարեկացուն, որքան բանաստեղծական բառի ստեղծագործական երկունքը: Հայոց լեզուն նա վերակերտել է ըստ իր հանճարի տարերփի: Նա չի գրել պատմական, ժամանակագրական, վիպական երկեր: Նրա լեզուն գերազանցապէս դրսեւորուել է ֆնարարեղբայրութեան մէջ: Զնայած դրան՝ Նարեկացին գրաբարի բառապաշարը հարստացրել է մեծագոյն չափերով: Նրա նորակազմ բառերի մի զգալի մասը այսօր էլ կենդանի եւ գործածական է գրական լեզուի մէջ: Իրրեւ լեզուաշինարար՝ Նարեկացին մնում է անհամեմատելի բարձրութիւն: Եւ այնուհանդերձ նրա աւանդածը մի տեսակ փչ է թվում իր հանճարի ընդգրկման ծիրից: Շատ բան նա տարել է իր հետ, իսկ թողածի մասին իրենց յատուկ համեստութեամբ նա կարող էր ասել. «Ահա զսակաւս ի բազմացն, զի նոֆօֆ եւ զայլսն իմաստասիրեսչիք»:

Գրիգոր Նարեկացու հմայփի շառաւիղն սկսում է նրա լեզուի եռիտութիւնից եւ բանաստեղծականութիւնից: «Նարեկացու պաշտամունքն ու ժողովրդականութիւնը հիմնականում կապուած է նրա բանաստեղծական խօսքի վարպետութեան հետ» (1), - գրել է լեզուաբան Վ. Առաքելեանը: Սա

Նարեկացու ստեղծագործութեան բովանդակութեան անտեսում չէ, այլ բովանդակութեանը համապատասխան լեզուի, ոճի, պատկերաւորութեան արժանիքների գնահատութիւն:

Նարեկացու լեզուն ինձ հետաքրքրում է նրա գեղարուեստական խօսքի պատկերաւորութեան տեսանկիւնից: Քերականական կառուցուածքի, ձեւաբանութեան, շարահիւսութեան, հնչիւնաբանութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները կարելի էր են լեզուաբանի համար: Գրականագէտի խնդիրը ուրիշ է: «Գրականագէտը չի հետազօտում լեզուի քերականական կառուցուածքը - գրել է էդ. Զրբաշեանը - այլ միայն ֆննում է լեզուի գեղարուեստական կիրառութիւնը, նրա դերը պատկեր ստեղծելու գործում: Զեւաբանութեան, շարահիւսութեան կամ բառապաշարի հարցերը նրան զբաղեցնում են սոսկ իրրեւ հեղինակի պատկերաւոր մտածողութեան արտայայտութիւններ: Լեզուաբանն ուսումնասիրում է լեզուի ընդհանուր օրէնքներ, իսկ գրականագէտը՝ նրանց իւրայատուկ դրսեւորումը կոնկրետ ստեղծագործութեան մէջ» (2):

Գրական ստեղծագործութիւնը խօսքի արուեստ է: Զեւի մէջ չկայ մի տարր, որ

կապ չունենայ բովանդակութեան հետ: Պատկերը կեանք է առնում բառի շնորհիւ, գեղարուեստական ստեղծագործութիւնը՝ պատկերներին:

Նարեկացու լեզուն միատարր չէ, այլ ներկայացնում է զարգացման տարբեր մակարդակներ: Այդ երեւոյթի մէջ մի կողմից արտացոլուել է նրա՝ իբրեւ բանաստեղծի լեզուի եւ գրելածեւի զարգացման ուղին, միւս կողմից՝ նրա լեզուի եւ ոճի բիրեղացման աւարտը: Նարեկացին գործ է ունեցել հայոց լեզուի երեք իրողութիւնների հետ: Առաջին, գրական լեզուի հետ, որը նրա կրթութեան լեզուն էր, երկրորդ, ժողովրդական կենդանի խօսակցական բարբառի հետ, երրորդ, ժամանակի գրական ցաշակի ու պահանջների հետ, որոնց հետեւում էին տարբեր հոսանքների գրողներ: Նարեկացու համար լեզուի գանձարան էր դասական գրաբարը: Հոգեւոր կենդանի մթնոլորտ էր Աստուածաշնչի լեզուն: Նա շատ քան է վերցրել Ագաթանգեղոսի եոխ ու շոյլ փոխաբերութիւններից, Խորենացու սեղմ ու ստոյգ արտայայտութիւններից, Կորիւնի բառակազմական հարուստ ձեւերից, Դաւիթ Անյաղթի փիլիսոփայական յստակ մտքերից ու սահմանումներից, Փաւստոս Բուզանդի վիպերգական պատումների ժողովրդական կենդանի ակումբներից, Ղազար Փարպեցու նարտասանական ձեւերի շարահիւսական բազմազանութիւնից, հոգեւոր երգերի, ներբողների քնարական բազմերանգ տարրերից եւ այլն: Իր ժամանակակիցներից Նարեկացին մասամբ հետեւել էր հօր՝ Խոսրով Անձեւացու մեկնաբանական ոճի պարզութեանը եւ ուսուցչի՝ Անանիա Նարեկացու բանաստեղծական լեզուի գեղեցիկ ոճին:

Նարեկացու լեզուի մասին տարածուած է այն կարծիքը, թէ բարդ է եւ խրթին: Ըստ իս՝ սա ճիշդ է մասամբ: Իսկ միթէ՞ պարզ է Աթազաթանգեղոսի, Կորիւնի,

Յովհան Օձնեցու, Թէոդորոս Բոթենաւորի եւ ուրիշների լեզուն: Նարեկացին չի ձգտել խրթին ու բարդ լինելու: Նա բանաստեղծ է, իսկ բանաստեղծական խօսքն ունի շարահիւսական աւելի հարուստ եւ ուրիշակ աւելի բարդ կառուցուածք: Բանաստեղծութիւնը ենթադրում է ոճի վսեմութիւն եւ բառիմաստների հարստութիւն: Նարեկացու Մատեանը մենախօսութիւն է, աղօթք, օրհներգութիւն, եւ նա թարգմանում է իրեն: Նա խօսում է լսելի, իսկ սա նշանակում է, որ նա գրել է այնպէս, ինչպէս թելադրել է մտքի քնական հոսքը՝ տարեբային՝ անմիջական, անկաշկանդ: Բարդութեան տպաւորութիւնը քիւում է նիւթի բովանդակութիւնից:

Նարեկացու լեզուի խրթնութիւնը Գ. Աւետիքեանը տեսել է երեք իրողութեան մէջ. ա) անծանօթ, բարդ բառերի գործածութիւն, որոնք կարօտ են բացատրութեան. բ) շարահիւսական ձեւեր, որոնց մէջ «թէպէտ եւ ընդելական իցեն բառքն, սակայն ըստ ոչ սովորութեան բերելով զիւրեանց շարամանութիւն յոն գերապանծ՝ մոայլ ի բանսն արկանեն» (3), գ) իմաստի, ասուածի մթութիւն, որ արտաքին պարզութեան մէջ ընթերցողին կարող է թուալ «թէ ըմբռնեաց զիմաստս, այլ ոչ ըստ գրողին մտաց» (4):

Նարեկացու լեզուի եւ ոճի բարդութիւնն ընդգծել են Ստ. Մալխասեանցը, Ե. Դուրեանը, Մ. Աբեղեանը, Հր. Անառեանը եւ ուրիշներ: Լեզուի եւ ոճի այդ առանձնայատկութիւնը մասամբ վերագրուել է ժամանակի ցաշակին, նարտասանական ձեւերի նախասիրութեանը, խօսքի գեղման դէպքերին: «Ըստ հին ժամանակի ցաշակի, - որքան խրթին, դժուար հասկանալի լինեք խօսքը, այնքան աւելի խորամիտ ու հետաքրքրական էր դառնում» (5): Մալխասեանցի կարծիքով՝ իր բարդութեամբ հայ հին մտեւնագրութեան մէջ առաջին

տեղը բռնում է Մատեանը, յետոյ՝ Գրիգոր Մագիստրոսի նամականին: Տաղերի մէջ Նարեկացու գործածած մի ֆանի «ինքնահնար կամ անգործածական բաները» եւ արուեստական եւ խորհրդաւոր արտայայտութիւնները եւս Աբեղեանը բացատրել է «ժամանակի հաշակի համեմատ իրթնաբանութեամբ» (6):

Անառեանը գտնում է, որ «Երեք տեսակ լեզու ունի Նարեկացին. 1) ճոխ, փարթամ, պերն գրաբար, 2) արդի աշխարհաբարին գրեթէ նման պարզ ու հասկանալի լեզու, 3) իր ժամանակի գաւառական բառերով լցուած մի լեզու, որ մեզ համար անհասկանալի է մնում» (7):

Վ. Առաքելեանը հաւաստում է, որ Մատեանը «պարունակում է մօտ եօթ հազար բառ, չունի անհասկանալի եւ եզակի գործածական արմատ բառ, որ մեզ անծանօթ լինի, իսկ տաղերի մէջ այդպիսի բառերը հասնում են մէկ տասնեակի» (8): Անշուշտ, եղել են այդ բառերի բացատրութեան փորձեր, բայց դա այլ հարց է (9):

Այսպիսով, Նարեկացու լեզուն ունեցել է զարգացման իր փուլերը: Պարզութիւնը խորթ չէ Նարեկացուն: Ապացոյց՝ Երգ Երգոցի մեկնութիւնը: Սա պայմանաւորուած է ոչ միայն ժանրի բնոյթով, այլեւ մեկնաբանական արձակի իւրայատկութեամբ: Այդ պարզութիւնը նկատելի է նաեւ Նարեկացու մի ֆանի տաղերի մէջ: Մեկնութիւնը Նարեկացին գրել է երիտասարդ հասակում: Կարելի է ասել, որ դա սեփական ռեի որոնման առաջին փուլն էր: Ստեղծագործական զարգացման երկրորդ փուլը, թերեւս, աչքի է ընկնում աւելի բուն որոնումներով: Դա պէտք է լինի ներբողների ստեղծման շրջանը՝ 980ական թուականները: Նիւթի վերամբարձութիւնը, կրօնական գաղափարների եւ պատկերացումների վերացականութիւնը

լայն հնարաւորութիւն են ընձեռում դիմելու նորակազմութիւնների, փոխաբերութիւնների, բարդ պարբերոյթների, շարահիւսական այնպիսի ձեւերի կիրառութիւնների, որոնք ոչ այնքան բանաստեղծական են, որքան հարուստ ստեղծարուեստական ու ձեւական: Թվում է, երիտասարդ Նարեկացին աւելի մեծ սեր է ցուցաբերել դէպի պարզութիւնը, դէպի ժողովրդական բառն ու բանը, ֆաններողագիր այր Նարեկացին: Երրորդ շրջանը Նարեկացու հանճարի դրսեւորման բարձրակէտն է: Մատեանի մէջ նա համադրում է իր ստեղծագործական նախորդ փուլերի լաւագոյն յատկանիշները՝ հասնելով իր լեզուի եւ ռեի բիւրեղացմանը: Ամէն ինչ նրա յուզաշխարհում արտացոլում եւ իմաստաւորում է սեփական ընկալմամբ եւ ժողովրդին է վերադարձում ուրոյն գեղեցկութեամբ:

Նարեկացու լեզուի առաջին յատկանիշը նորաբանութիւնների հարստութիւնն է: Ամէն մի բանաստեղծ բառաստեղծ է նաեւ: Նարեկացին, սակայն, չունի հաւասար մրցակից: Նրա բառաստեղծական ձիրքն ունի անանց նշանակութիւն: Նարեկացին ստեղծել է բազմաթիւ նորակազմ բառեր, որոնց մի մասը այսօր հնացել է՝ լեզուի զարգացման պատմական օրինաչափութեամբ, կապուած լինելով կրօնական հասկացութիւնների եւ պատկերացումների հետ:

Բառը բանաստեղծութեան մէջ, ի տարբերութիւն նրա բառարանային բուն իմաստի, ստանում է այլ իմաստ ու տարողութիւն: Նա դառնում է մակդիր, փոխաբերութիւն եւ այլն: փոխաբերութիւնը գեղարուեստական մտածողութեան մշտական յատկանիշն է: «Պոեզիայի բոլոր գեղեցկութիւններից միայն դա է, որ սովորել չի կարելի» (10),– գրել է դեռեւս Արիստոտելը:

Առանց փոխաբերութեան չկայ

բանաստեղծութիւն: Փոխաբերութիւնները, սակայն, որքան էլ բանաստեղծութեան կայուն տարր, փոխուում են դարաշրջանից դարաշրջան, բանաստեղծից՝ բանաստեղծը: Ինչ խօսք, միջին դարերի բանաստեղծը փոխաբերութիւններ էր վերցնում կեանքի ու բնութեան այլ ոլորտներից, նոր ժամանակի բանաստեղծը՝ այլ: Աւելի եհշտ՝ միեւնոյն ոլորտից էլ վերցրած նրանց փոխաբերութիւններն իրենց վրայ կրում են դարաշրջանի աշխարհայեցութեան դրոշմը:

Արդ, որո՞նք են Նարեկացու պատկերաւորութեան միջոցների համակարգի բնորոշ գծերը: Ի՞նչ աւանդոյթներ է շարունակում եւ ի՞նչ նորութիւններ է բերում նրա արուեստը:

Նախ՝ մակդիրի մասին: Մակդիրի մէջ արտացոլում է առարկայի անհատական ընկալման երանգը, բանաստեղծի յուզական վերաբերմունքը: Նարեկացին եւ, առ հասարակ, հին բանաստեղծները ոչ մի բանի վրայ այնքան մակդիրներ չեն ծախսել, որքան Աստուծոն բնորոշելու համար: Նարեկացու մակդիրների մի մասը եւս գալիս է Աստուծաշնչից, հոգեւոր քրտնից, հայրաբանական գրականութիւնից՝ իրրեւ փոխառութիւն: Իրենց նոխութեամբ թէեւ առանձնանում, բայց դեռեւս Մատեանի եւ մի քանի լաւագոյն տաղերի մակդիրների թարմութիւնը չունեն Նարեկացու մի շարք տաղերի, գանձերի եւ ներբողների շատ մակդիրներ, որոնք հիմնականում կրօնական հասկացութիւնների, սրբութիւնների եւ պատկերացումների կաղապարուած արտայայտութիւններ են եւ ոչ թէ ինքնուրոյն գիւտեր: Իրրեւ նորութիւն՝ Նարեկացին իր կրօնական տաղերում ձգտում է գուտ մտահայեցականին տալ առարկայական գիծ, վերացականը դարձնել զգայելի ու բանաստեղծական: Կրօնական

պատկերացմամբ Հայ Աստուծոց ծագած Որդին ընկալուել է որպէս լոյսից ծագած լոյս, լոյսի նառագայթ. «ծոցածագենի ծագումն ծիր մշտածաւալ անփոխ» (ԳՆՏԳ 108), Աստուծամօրը բնութագրում է իրրեւ «Լուսին լրացեալ, լուսով լցեալ՝ ի լոյսն աննուաղելի առաւատուն լուսոյ» (ԳՆՏԳ, 206), կամ իրրեւ՝ «Աստուծապարփակ երկիր լուսածին» (ԳՆՏԳ, 224) եւ այլն: Նարեկացու այս բնոյթի մակդիրները քնարական նշմարիտ յոյզի երանգ են հաղորդում կրօնական նիւթին:

Նարեկացին ձգտում է տալ ոչ թէ մէկ եւ միակ մակդիրը՝ բնութագրելու համար առարկան կամ երեւոյթը, այլ սիրում է թուարկել գրեթէ հնարաւոր պատշաճ մակդիրները, որոնք մի կողմից ամբողջացնում են առարկայի բնութագիրը՝ նրա տարրեր յատկանիշների թուարկմամբ, միւս կողմից ուժեղացնում են յուզական լիցքն ու տպաւորութիւնը: Կուտակումների այդ սէրը Նարեկացու ունի անբաժանելի իւրայատկութիւններից է: Սա վերաբերում է պատկերաւորութեան ցանկացած միջոցին: Սա տաղանդի հարց չէ միայն, այլ նաեւ աշխարհայեցութեան: Բանաստեղծը գործ ունի նիւթական եւ հոգեւոր, իրական ու երեւակայական երկու աշխարհների հետ: Առարկայի բնութագիրը չի կարող նրա համար լրիւ լինել բացառապէս միայն նրա իրական յատկանիշների բնութագրմամբ: Կայ նաեւ կրօնական հայեցակէտից լրացնելու ներքին պահանջը: Ահա, օրինակ, ինչպէս է բնութագրում ծառերը. «Ծառք ամբարձուղէշք, բիւրուտեանք, ծիրանածայր ընձիղք երփնագեղք, քաղցրապտուղք եւ ախորժելիք, երկնընթացք դիտակք ընտրութեան, լուսանունդք եւ տիրահաստատք, շահաւէտք եւ արդիւնականք, առոգեալք եւ արմատացեալք, պարարեալք եւ պանծացեալք ի ցօղո պարգեւողին» (ԳՆՄ, 424): Տիրահաստատ մակդիրը, որ նշանակում է

Աստուծու կողմից հաստատուած, աստուածատունկ, պատկանում է կրօնական մտածողութեան մարզին, սակայն առանց այդ քառի ծառերի բնութագիրը Նարեկացու համար կը լինէր թերի:

Նարեկացին ունի մակդիրների կուտակման այնպիսի հատուածներ, որոնք էջեր են կազմում: Նրքերանգների այն հարստութիւնը, քառիմաստների այն բազմազանութիւնը, որ ստեղծում է Նարեկացին պատկերաւորութեան միջոցների կուտակմամբ, ընդլայնում է ոչ միայն իմացութեան սահմանները, այլև խորացնում է զգացմունքների աշխարհը: Ահա, օրինակ, ինչպէս է Նարեկացին բնութագրել Սողոմոն Իմաստունին՝ իբրև բազմամեղ մէկի, որի մեղանչման ու գղջման դրաման բանաստեղծն առաւել մօտ ու սերտ է համարում իր ողբերգութեանը.

Իմաստուն սխալական, ամենագէտ  
յանցաւոր,

Ամաւթապարտ գղջացեալ,  
տարակուսեալ աշխարող,

Աղաչաւոր կոպաշտեալ, յամբային  
դարձաւոր,

Կեղակարծ ընկալեալ, կասկածաւոր  
հաշտութիւն,

Յապայս յիշատակ, յերկրայս  
փրկութիւն,

Չհաւատալի գիւտ, ի մասնէ  
մնացուած,

Խարդաւանեալ գերի, կիսակտուր  
պրծեալ, կամաւոր անճամատն,

Տմարդի յղփացեալ, բազմավրէպ  
հանճարեղ: (Բան ԽԸ, Բ)

Այստեղ նոյնիսկ ստորոգեալ չկայ: Բայց կայ շարժում: Միտքն անցնում է նրքերանգից նրքերանգ, յատկանիշից յատկանիշ, եւ դա միշտ վերընթաց գծով՝ սովորականից դէպի առաւել յատկանշականը: Անշուշտ, իմաստուն սխալական մակդրական պատկերն աւելի

մեղմ է հնչում բազմավրէպ հանճարեղ-ի յարաբերութեամբ: Առհասարակ Նարեկացու մի մակդիրը կարծես լիցք է հաղորդում միւսին, ինչպէս ալիք՝ ալիքին: Յատկանիշը հարստանում է նոր յատկանիշով: Բառը ձեռք է բերում իմաստակիր նոր տարողութիւն: Այսպէս, օրինակ, քնարական հերոսը ինքնաձաղկմամբ իրեն կոչում է՝

Ունայնաբան շաղակրատ,  
պահարամիտ գոռոզ,

Անասնաւրէն ապիրատ, դժոխային  
ագահ, աներասան յանդուգն:

(ԲԱՆ ԾԶ, ա)

Այստեղ ունայնաբան մակդիրը վերաբերում է շաղակրատին: Բայց շաղակրատն էլ իր հերթին ուժեղացնում է մակդիրը: Ուստի երկուսն էլ միասնաբար բնութագրելով քնարական հերոսին, թեւ կրկնաբանութեան տպաւորութիւն են թողնում, բայց ոչ թէ յատկանիշը դնում են յատկանիշի կողքին, այլ խորացնում են երեւոյթի նրքերանգը:

Նոյնանիշ մակդիրների կուտակմամբ Նարեկացին նոյնքան յաջողութեամբ է բնութագրում ոչ միայն առարկան, այլև մարդկային հոգեվիճակը: Առաջին հայացքից թվում է, թէ նա պարզապէս դիմում է թուարկման իր սիրած ձեւին:

Մինչդեռ իրականում Նարեկացին մակդիրների կուտակմամբ զարմանալի դրամատիզմ է հաղորդում խօսքին, բացայայտում հոգեկան ապրումների այնպիսի ծալքեր, որ կարող է տեսնել միայն ինքը, ստեղծում է այնպիսի մակդիրներ, որ կարող է երկնել միայն նրա հանճարը: Առարկան կամ երեւոյթը նման դէպքերում լուսագծում է տարբեր կողմերից, եւ ընթերցողն ընկալում է հենց այն յատկանիշը, որի վրայ բանաստեղծը սեւեռում է իր հայեացքը: «Բարկութեան բոցով ցոլացայ տիղմս բանաւոր» (Բան Ի, Ե), - այստեղ բարկութեան բոց նշանակում

է բարկ, թեժ բոց եւ ոչ թէ գայրոյթի, ցասման բոց: Մակդրական պատկերի առանել տարողութիւնը կրում է քանաւոր տիղմ փոխաբերութիւնը: Իրական ինչ յատկանիշ էլ վերագրուէր տիղմին, չէր հասնի քանաւոր, քանական, մտածող մակդիրին, որն անշունչ առարկան հասցնում է գրեթէ անձնաւորման: Իսկ Նարեկացին ցանկացել է ընդգծել հենց այդ յատկանիշը:

Նարեկացու լեզուի պատկերաւորութեանն առանձին գեղեցկութիւն են տալիս այն մակդիրները, որոնք մի տեսակ ստեղծում են անհամատեղելի համատեղութիւն: Այդ հակադրամիասնութեան մէջ առարկան կամ երեւոյթը բացայայտուում է մի նոր, երրորդ յատկանիշով, որը հանդէս է գալիս իբրեւ հակադիր յատկանիշներից միացնող կամուրջ: Այսպէս, երբ Նարեկացին ասում է՝ «Դի կենդանի եւ խաւսուն մեռեալ» (Բան ԺԸ, է), ապա նա շեշտում է մի երրորդ յատկանիշ՝ կեանքի չհատուած այն լարը, որ դեռ կայ նրանց միջեւ: Սա մակդիրների այն տեսակն է, որ ստեղծում է օբյեկտիւնի սկզբունքով: Հակադիր յատկանիշներից ծագում է նոր յատկանիշ: Առարկան ընկալուում է նոր նրբերանգով, բառը՝ նոր նշանակութեամբ: Ահա, օրինակ՝ քանական անասնական (Բան ԻԲ, ք), ցամաքեալ խոնաւութիւն (Բան ԻԹ, դ), ընտանիք թշնամիք, հարագատֆ հակառակֆ (Բան ԾԶ, ա), անկայուն պնդութիւն (ԲԱՆ ԶԵ, ա), յոգնատատան հիմն (ԲԱՆ ԶԵ, Բ), անմոռնչ ձայն (Բան ԿԶ, ա), տատակացան երկրագործ, երջանկութիւն եղկելի, բարձրութիւն խոնարհեալ, պատուիրագանցութիւն յարակայ (Բան ԾԶ, ա) եւ այլն:

Այսպիսով, խօսքի արուեստը չունի մակդիրների գործածութեան մի ձեւ, որ անձանօթ լինի Նարեկացուն: Միջնադարեան տաղերգուները ոչ միայն ուղղակի օգտուել են Նարեկացու մակդիրներից, այլեւ հետեւել

են մակդիրակերտման նրա սկզբունքներին: Նարեկացուց շատ բան են վերցրել նաեւ նոր ժամանակների բանաստեղծները՝ Արովեանից եւ Ալիշանից մինչեւ Սիամանթոն Մեծարեանց, Թումանեանից եւ Իսահակեանից մինչեւ Եղիշէ Զարեանց ու Պարոյր Սեւակ: Նարեկացու մակդիրների մէջ դրսեւորուել է ոչ միայն նրա ռեալ-արտայայտչական ինքնատիպութիւնը, այլեւ դարաշրջանի գեղարուեստական նաշակը:

## Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՂԲԻԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԵԶՈՒԻ ՊԱՏԿԵՐԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ա. Բառի տարողութիւնը պատկերաւորութեան  
մէջ

- 1.- Վ. Առաքելեան, նշվ. աշխ., էջ 231:
- 2.- Էդ. Զրբաշեան, Գրականութեան տեսութիւն, էջ 234:
- 3.- Նարեկուծ, էջ 2-է:
- 5.- Ստ. Մալխասեանց, Մատենագիտական դիտողութիւններ, էջ 228:
- 6.- Մ. Արեղեան, հ. Գ, էջ 613-614:
- 7.- Հր. Անտոնեան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Երեւան, 1942, էջ 545:
- 8.- Վ. Առաքելեան, նշվ. աշխ., էջ 254:
9. Գրիգոր Նարեկացի, Տաղեր, տեքստի բարգմանութիւնը, ներածականն ու ծանօթագրութիւնները Արշալիր Մխիթարեանի, Երեւան, 1957, էջ 115-122
- 10.- Արիստոտել, Պոետիկա, բարգմ. Ա. Կարապետեանի, Երեւան, 1955, էջ 202:
- 11.- *А. С. Лихачёв. Поэтика древнерусской литературы, с. 180-181.*
- 12.- Ագաթանգեղոս, Հայոց պատմութիւն, աշխարհարար բարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1983, էջ 414:
- 13.- *"Античные риторики", М., 1978 с. 129-130.*
- 14.- Նոյն տեղում, էջ 130:
- 15.- *Г. Ф. Гегель. Эстетика, в 4-х тт., т. 2, М., 1969, с. 114.*
- 16.- Էդ. Զրբաշեան, Գրականութեան տեսութիւն, էջ 252:
- 17.- Ստ. Ագոնց, ճարտասանութիւն, էջ 5: